

**Փոխմարզպետ Նունե Մովսիսյանը մասնակցեց ԱՄՆ Խաղաղության կորպուսի
Հայաստանյան գրասենյակի 22-րդ խմբի երդման արարողությանը**

Նոյեմբերի 12-ին Արագածոտնի փոխմարզպետ Նունե Մովսիսյանը մասնակցեց ԱՄՆ Խաղաղության կորպուսի Հայաստանյան գրասենյակի 22-րդ խմբի երդման արարողությանը:

ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը շնորհակալություն հայտնեց Արագածոտնի մարզպետարանին՝ ջերմ համագործակցության համար և ներկայացրեց 2 կամավորներին, ովքեր 2 տարի աշխատելու են Արագածոտնի մարզի Աշտարակ և Աշնակ համայնքներում: Նրանց գործունեությունը ուղղված է դպրոցներում անգլերեն լեզվի ուսուցման բարձրացմանը և մշակութային կապերի ամրապնդմանը: